ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ » ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ

22.11.2014թ. Քաղաք Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան /դեկան/

Քարտուղար Գ. Առուշանյան /քարտուղար/

Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Գ. Առուշանյանը, , Հ. Մարգպանյանը, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, ուս. խորհրդի նախագահ Լ. Ալեքսանյան , ՈՒԳԸ նախագահ Լ. Բլբուլյանը, Ս. Սաֆարյանը, նիստին հրավիրված էին՝ Գ. Սիրոյանը, Ն. Մկրտչյանը, Ա. Ուլիխանյանը և Ն. Էդիլյանը:

Օրակարգ

1.Ամբիոնի վարիչների հաշվետվությունը ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների գործունեության մասին:

/Զեկ. Հ. Մարգպանյան,, Գ. Հովհաննիսյան/

2.Ֆակուլտետի ՈՒԽ-ի և ՈՒԳԸ նախագահների հաշվետվությունները համապատասխան կառույցների գործունեության մասին:

/Զեկ. Լ. Ալեքսանյան, Լ. Բլբուլյան/

3.Ընթացիկ հարցեր

1. Լսեցին - «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի վարիչ Հ. Մարգպանյանին

Հ. Մարգպանյանը զեկուցեց, որ 2014 – 2015 ուս. տարվա առաջին կիսամյակում «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի աշխատանքները կազմակերպվել են համաձայն հաստատված ամբիոնի աշխատանքային պլանի՝ կիսամյակի կտրվածքով: Ամբիոնի բոլոր դասախոսները աշխատել են հաստատված անհատական ծանրաբեռնվածությունների շրջանակում և հիմնականում կատարել են այն պահանջներն որոնք նախատեսված են եղել ուսումնական գործընթացի տարբեր օղակների համար սահմանված ծրագրերով. ուսումնական պլանի համաձայն անհրաժեշտ ծավալի դասաժամերով կարդացվել են

դասախոսություններ, անց են կացվել սեմինար և գործնական պարապմունքներ, ինչպես նաև համապատասխան ընթացիկ քննություններ և ստուգումներ:

Ամբիոնը բավարար չափով իրականացնում է նաև ուսանողների կուրսային աշխատանքների ղեկավարման գործունեությունը, կազմակերպում է լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություն:

Ամբիոնի որոշ դասախոսներ ակտիվորեն ներգրավված են / Հ. Մարզպանյան, Գ. Սիրոյան, Ա. Սարիբեկյան, Գ. Գալստյան, Է. Հովհաննիսյան/ գիտահետազոտական գործունեության մեջ: Հ. Մարզպանյանը նշեց, որ ֆակուլտետի նախորդ նիստում քննարկվել է դասընթացների աշխատանքային փաթեթների /պորտֆոլիոների/ կատարման ընթացքը և առաջարկվել է դասախոսներին ակտիվացնել և ավարտին հասցնել այդ գործընթացը: Նկատի ունենալով այս հանգամանքը ամբիոնի վարիչը պորտֆոլիոների ներկայացման վերջնաժամկետ համարել դեկտեմբերի 15-ը:

Լսեցին - «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանին

Նա նշեց, որ չնայած ինքտ նոր է ստանձնել ամբիոնի վարիչի պարտականությունները, սակայն ամբիոնում առկա նախորդ տարիների աշխատանքային գործունեությունը և առկա բազան բավականին բարենպաստ պայմաններ են ստեղծում ամբիոնային աշխատանքները շարունակելու և բարելավելու համար:

Մասնաճյուղի գործունեության կազմակերպման ժամանակացույցով նախատեսված կարգով համապատասխան ժամկետներում ամբիոնի կողմից կազմվել և ուսանողներին է տրամադրվել կուրսային աշխատանքների թեմաները, առարկայական քննական հարցաշարերը: Ընթացիկ քննությունները և ստուգումները անց են կացվել ըստ ժամանակացույցի: Ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքերի ամփոփումը /ամբիոնի կտրվածքով/ ցույց է տալիս, որ գործընթացը անցել է բավականին լավ , իսկ արդյունքները կարելի է համարել բավարար:

Ամբիոնի վարիչը նշեց, որ ըստ դասալսումների ժամանակացույցի անց է կացվել դասալսումներ, փոխադարձ դասալսումներ, որոնց արդյունքները քննարկվել են ամբիոնում:

Ուշադրություն է դարձվել նաև դասախոսների գիտական գործունեությանը: Ամբիոնի դասախոս Լիաննա Բեգինյանի թեկնածուական թեզի նախապաշտպանությունը ավարտվել է, իսկ պաշտպանությունը նախատեսված է հունվարին:

Արտահայտվեցին - Գ. Ավետիսյանը, Պ. Ասիլբեկյանը

Արտահայտվողները նշեցին, որ ֆակուլտետի երկու մասնագիտական ամբիոններում կատարված աշխատանքները կարելի է գնահատել բավարար:

Որոշեցին - ամբիոնի վարիչների ընթացիկհաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ ընդունել ի գիտություն, իսկ ամբիոնի գործունեությունը գնահատել բավարար:

2.Լսեցին - ուսանողական խորհրդի նախագահ Լ. Ալեքսանյանին

Նա նշեց, որ ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողական խորհուրդը իր հասարակական գործունեությունը ֆակուլտետում իրականացնում է՝ հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ Ուսանողական խորհրդի կանոնադրությունը: Մասնավորապես ֆակուլտետի ՈՒԽ –ի գործունեության նպատակներն են հանդիսանում.

- պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
- համալսարանի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցերը,
- իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին,
- աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
- մասնակցել ֆակուլտետում ներքին կարգապահության պահպանմանը:

2014 – 2015 ուսումնական տարվա ընթացքում Ուսանողական խորհուրդը սերտ համագործակցել է ֆակուլտետի դեկանի, ֆակուլտետում առկա երկու մասնագիտական ամբիոնների, ինչպես նաև դեկանատի հետ: Այս ընթացքում ՈՒԽ -ն հետևել է ֆակուլտետային ներքին կարգապահության պահպանմանը, ուսանողների հաճախություններին, քննարկվել և լուծում է տրվել կրթաթոշակների հարցով դիմած ուսանողների բողոքներին, հետևողական է եղել քննական հարցաշարերի տրամադրման հարցում, աշխատանքներ է տարել առաջին

կուրսեցիներին բացատրելու թեստային համակարգով քննական ընթացակարգը, այնուհետև օգնել է կատարել ընթացիկ քննությունների ժամանակ առաջացած բողոքների և խնդիրների պարզաբանում:

Ուսումնական տարվա սկզբից ՈՒԽ –ի աշխատանքային նպատակն էր հանդիսանում ներգրավել առաջին կուրսի ուսանողներին ֆակուլտետային ուսանողական խորհրդի աշխատանքներին: Կազմվել է ֆակուլտետի ՈՒԽ –ի նոր խումբ՝ ընդգրկելով ֆակուլտետի շնորհալի ուսանողներին:

Կազմակերպվել է միջոցառում նվիրված ՀՀ անկախության 23 -ամյակին:

Ֆակուլտետի որոշ ուսանողներ ակտիվ մասնակցություն են ունեցել ուսանողի օրվա կապակցությամբ կազմակերպված միջոցառման նախապատրաստական աշխատանքներին:

Այժմ աշխատանքներ են տարվում 2-րդ ընթացիկ քննությունների և ստուգարքների հարցաշարերի ճշգրտման և ուսանողներին ներկայացման ուղղությամբ:

ՈՒԽ – ն հետևողական է ուսանողների առաջարկներին և պահանջներին:

Լսեցին - ՈՒԳԸ –ի նախագահ Լ. Բլբուլյանին

Նա նշեց, որ 2014 – 2015 ուս. տարվա առաջին կիսամյակի ընթացքում տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունն իրականացրել է կանոնադրային պահանջներից բխող գործառույթներ ու քայլեր, աջակցել է ուսանողությանը՝ գիտական և կրթական ոլորտներում, նպաստել է ուսանողների գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը և ուսանողական առօրյայի կազմակերպմանը:

Արտահայտվեցին - Հ. Մարգպանյանը, Ն. Ասիլբեկյանը

Արտահայտվողները նշեցին, որ ֆակուլտետի Ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ –ի կատարած աշխատանքները կարելի է գնահատել բավարար:

Որոշեցին - Ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ –ի կատարած կիսամյակային աշխատանքները գնահատել բավարար:

3.Լսեցին - ընթացիկ հարցեր

1.Ֆակուլտետի 2014–15 ուս. տարվա ըստ գործող մասնագիտությունների առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների քննարկման և ամփոփման մասին
/Զեկ. Ն. Խուդավերդյան/

Ն. Խուդավերդյանը նշեց, որ ըստ մասնագիտությունների 2014-15 ուս. տարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննություններն ու ստուգումներն անց են կացվել նախապես դեկանատի կողմից կազմված և տնօրենության կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն: Նա նշեց, որ դեկանատը վերլուծել է 2014-15 ուս. տարվա առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները: Ն. Խուդավերդյանը ներկայացրեց, որ ֆակուլտետում առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները կազմակերպվել է թվով 161 ուսանողների համար: Այդ թվում՝ անվճար համակարգում սովորող 29 ուսանողների և վճարովի համակարգում սովորող 132 ուսանողներիի համար: Ընթացիկ ստուգման արդյունքում միջին գնահատականը վճարովի ուսուցման համակարգում կազմել է 5,69, իսկ աանվճարը՝ 8,19: Ինչ վերաբերվում է ընթացիկ քննություններին, ապա այստեղ միջին գնահատականները համապատասխանաբար կազմել են՝ 2,16 և 3,00: Դրական կարելի է համարել այն փաստը, որ անվճար համակարգի ոչ մի ուսանող օ միավոր չի ստացել: Աղյուսակի տեսքով կից ներկայցվում է վերլուծության արդյունքները ըստ մասնագիտությունների և կուրսերի:

Արտահայտվեցին - Հ. Մարզպանյանը, Գ. Սիրոյանը, Ն. Մկրտչյանը

Արտահայտվողները նշեցին, որ թեստային համակարգի կիրառման միջոցով ստուգել ուսանողների գիտելիքները ամբողջությամբ հնարավոր չէ: Ընթացիկ քննության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկեցին ընթացիկ քննությունների տարբերակները կազմել այնպես որ այնտեղ ներառվեն ինչպես թեստային առաջադրանքներ այնպես էլ տեսական հարցեր, խնդիր-առաջադրանքներ: Դասախոսներին առաջարկվեց առաջարկներ ներկայացնել քննական տարբերակների կատարելագործման վերաբերյալ:

Որոշեցին - 2014 -2015 ուս. տարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները համարել բավարար:

2. Ֆակուլտետի քարտուղար -օպերատոր Գ. Առուշանյանի պարգևատրման մասին

Լսեցին - Ն. Խուդավերդյանին

Նա նշեց, որ ֆակուլտետի աշխատանքերի արդյունավետության բարձրացման համար միշտ էլ օգտագործվել են տարբեր տեսակի խրախուսման ձևեր այդ թվում նաև դրամական պարգևատրում: Ն. Խուդավերդյանը նշեց, որ նոյեմբեր ամսվա կտրվածքով առաջարկում է դրամական խրախուսանքի ներկայացնել ֆակուլտետի գործավար Գ. Առուշանյանին բարեխիղճ աշխատանքի համար:

Արտահայտվեցին - Հ. Մարգպանյանը, Գ. Ավետիսյանը, Պ. Ասիլբեկյանը

Նրանք նշեցին, որ իսկապես Գ. Առուշանյանը կատարել է մեծ ծավալի աշխատանքներ և լիովին արժանի է դրամական պարգևատրման:

Որոշեցին - Գ. Առուշանյանին ներկայացնել դրամական պարգևատրման:

Խորհրդի նախագահ *Ն. Խուդավերդյան*

Քարտուղար *Գ. Առուշանյան*